

ՀՏԴ


Գրականագիտություն

ԱՐԺԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Լ. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր



Հայ բառարանագրությունը հարուստ պատմություն ունի, որտեղ ուրույն տեղ են զբաղեցնում բարբառային բառարանները: Այս բնավագառում նշանավոր են Հր. Աճառյանի «Հայերեն գառառակա՛ն բառարա՛ն», «Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ», Ս.Ամատունու «Հայոց բառ ու բան», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայոց լեզվի բարբառային բառարան» և մի շարք այլ բառարաններ, որտեղ հեղինակները ներկայացրել են հայերենի հարյուրավոր խոսվածքներում

գործածվող տառնյակ հազարավոր բարբառային և փոխառյալ բառեր, դարձվածներ, ռճական արտահայտություններ: Բիչ չեն նաև առանձին բարբառների բառապաշարն արտացոլող բառարանները և բարբառագիտական ուսումնասիրությունների ու բանահյուսական ժողովածուների հավելվածներում տեղադրված բառացանկերը, որոնք, սակայն, ունեն մասնակի բնույթ և չեն արտացոլում խնդրո առարկաբարբառների ողջ բառապաշարն ու առավել ևս՝ դրա ձևական ու իմաստային նրբությունները: Այս տեսակետից նախադեպը չունեցող աշխատություն է Ա.Յու. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանը», որը նշանակալի ներդրում է Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության և ընդհանրապես հայ բարբառագիտության ու բառարանագրության պատմության մեջ: Նախորդ նմանատիպ աշխատություններից սույն բառարանն առանձնանում է մի շարք կարևոր սկզբունքներով ու առանձնահատկություններով, որոնք կարող են օրինակելի լինել ապագա բառարանագիրների համար.

1. «Ղարաբաղի բարբառի բառարանը» հայերենի կոնկրետ բարբառներից նվիրված բառարաններից ամենածավալունն (846 էջ) ու լիակատարն է, որտեղ ընդգրկված է Ղարաբաղի բարբառում գործածվող գրեթե ողջ բառապաշարը (շուրջ 40.000 միավոր):

2. Ներկայացված են գլխաբառների՝ բարբառի խոսվածքներում գործածական հնարավոր բոլոր հնչյունափոխված տարբերակները, որոնցիցյուրաքանչյուրը, բացի գլխաբառի մոտ նշելուց, հեղինակը ըստ այբբենական կարգի տեղադրել է համապատասխան տեղում՝ հղելով գլխաբառին:

3. Յուրաքանչյուր բառահոդվածի վերջում՝ բառի բոլոր իմաստները բացատրելուց հետո բերվում են այդ բառով սկսվող դարձվածներն ու ոճերը՝ ներառյալ տեղական նշանակության՝ կոնկրետ որևէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող դարձվածները:

4. Բառարանն իր բնույթով կարելի է համարել նաև ստուգաբանական, քանի որ գլխաբառերից հետո բառի լեզվաոճական և քերականական նշումներից բացի համառոտագրությամբ տրվում են ծագումնաբանական նշումները. նախ նշվում է այն լեզուն, որից տվյալ բառն անցել է բարբառին, որից հետո ներկայացվում է փոխառու լեզվի ձևը, ինչպես նաև բուն իմաստը, եթե բառը բարբառում գործածվում է այլ իմաստով:

5. Հստակորեն և մանրամասնորեն են ներկայացված գլխաբառերի և դարձվածների բոլոր իմաստները: Առավել ընդարձակ են տրվում ազգագրական բնույթի բառերի նշանակությունները:

6. Բառերի և դարձվածների նշանակությունները պարզաբանելու և հիմնավորելու համար իմաստների բացատրությունից հետո նախադասություններով (երբեմն բառակապակցություններով) բերվում են տպագիր, ձեռագիր և բանավոր աղբյուրներից առնված օրինակներ՝ վերջում՝ համառոտագրությամբ նշելով աղբյուրը, իսկ տպագիր աղբյուրների դեպքում՝ նաև վերնագիրն ու էջը:

7. Բառարանը կազմված է բարբառային խիստ տառադարձությամբ, ինչը նմանատիպ աշխատանքների կարևոր պահանջներից է:

8. Բառարանի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկը, որտեղ ներկայացված են տպագիր և ձեռագիր գրեթե բոլոր այն աղբյուրները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Ղարաբաղի բարբառին:

9. Ղարաբաղի բարբառի յուրահատուկ ուսումնասիրություն է բառարանի «Ներածությունը», որտեղ հստակորեն ներկայացված են բարբառի ուսումնասիրության պատմությունը, հնչյունաքերականական, բառագիտական օրինաչափություններն ու բառարանի կառուցվածքը:

Նման բառարանի կազմումը հեղինակի նրկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է, որին գուգահեռ նա հրատարակել է Ղարաբաղի բարբառին և բանահյուսությանը նվիրված տասնյակ գիտական աշխատանքներ ու ժողովածուներ, միջազգային և հանրապետական գիտաժողովներում բազմիցս հանդես է եկել զեկուցումներով, անձամբ և ուսանողների հետ կազմել Ղարաբաղի տասնյակ խոսվածքների վկայագրեր, Ստեփանակերտում 2008թ. կազմակերպել միջազգային հայերենագիտական 8-րդ գիտաժողովը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրեթե բոլոր գյուղերից հավաքագրել բանահյուսական հարուստ նյութ:

«Ղարաբաղի բարբառի բառարանը» կազմված է գիտական պատշաճ մակարդակով և մեծ նշանակություն կարող է ունենալ Ղարաբաղի և հայերենի մյուս բարբառների ուսումնասիրության բնագավառում: Այն արժանի ներդրում է հայ բարբառագիտության և բառարանագրության պատմության մեջ: